ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-21-10/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «02» Փետրվարի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փայլ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Սիմոնյանի, ով գործում է «Փայլ Սերվիս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **08.02.2021թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-21-10/4-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **բիոզուգարանների տեղադրման և սպասարկման** ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան Ծառայություն՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության **առավելագույն գինը կազմում է 9 996 000 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

2.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո, մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ՝ 08.02.2021թ.-ից: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցած Ծառայության դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառած լինելու դեպքում:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված ծառայությունների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Փայլ Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Ագաթանգեղոսի 6/1
ՀՀ ՖՆՎ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570025658340100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ [illegible]
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-10/4-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/հ	CPV կոդ	Անվանումը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	90511160/502	Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Բիոզուգարանների տեղադրման և սպասարկման ծառայություններ)	Դրամ	9 996 000	ՀՀ ՊՆ զորամասեր	ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա՝ 1-4-րդ եռամսյակներ բայց ոչ ուշ քան 20.12.2021թ.

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-10/4-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/հ	CPV կոդ	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	90511160/502	Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Բիոզուգարանների տեղադրման և սպասարկման ծառայություններ)	1,375,700	3,626,100	6,626,100	9,996,000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ԱՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Փայլ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ